

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Փ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԻՍԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում
ն ու մ և թէ Արտասահմանում 10 ռուբլի,
տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ
ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամս-
ականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսա-
կանը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝
2 ռ., ամսական 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՔԱԳՐԱՍԱՆԻ:
Օտարաբարդարացիները պէտք է դիմեն հետևեալ
հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Իսկ
արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՔԱԳՐԱՍԱՆԻ:

Օտարաբարդարացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԻՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Էլիս Գիլլոն. Շողոքոթութեան ուղերձ. Երբ-
պացի թղթակիցը Ալաշկերտում. Հայոց հարցը և
հերոսական մամուլը. — ՆԵՐԿԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ի
րաւադրական ընկերութեան ժողովը. Ժողովրդա-
կան թատրոն. Երաժշտական դպրոցի կոնցերտը.
Նամակ Ատարխանից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Գեր-
մանական թէյիստագում. Ատարխանի միջնա-
րակայն ճգնաժամը. Նամակ Պարսկաստանից. —
ԽԱՌՆ ԼՈՒՆԵՐ. — ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ թիւր-
քիայից.

ԷՄՈՒ ԳԻՂՈՆ

Անդրաշխի թղթակից Էլիս Գիլլոնից ըս-
տացանք հետևեալ հեռագիրը. Կարսի նա-
հանգի կարգաւորման հեռագրական կա-
յարանից.

«Նա համարի վրա թիւրքերը բռնեցին ինձ
այն պատրուակով, թէ իմ անցագիրը կար-
գին չէ: Գնում եմ յետ դեպի Երզրում և
կը պահանջեմ վարձատրութիւն իմ վնաս-
ների համար»:

Գիլլոն

Նոյն դէպքի մասին, որի վերաբերեալ
մենք արդէն տպեցինք մի հեռագիր «Մշա-
կ» անցեալ համարում, ստացանք կար-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Թ Ի Ի Ր Գ Ի Ա Յ Ի Յ

I

Կ. Պօլիս, ապրիլի 20-ին

Մուշի առաջնորդ Ներսէս վարդապետ Խարա-
խանեան, որ երբեք տարիէ ի վեր տեղւոյն բանտը
կը դառնուէր, վերջերս բանտէն ազատած է և ու-
տիկանական հակութեամբ Պօլիս կը բերուի:
Խարախանեան հետագրով սրբազան պատրիարքին
իմացուցած է իր մեկնումը:

Ներսէս վարդապետ իր ազգին նուիրուած,
կարող և արժանաւոր եկեղեցական մըն է.
Թիւրք կառավարութիւնը բանտին մէջ սարսա-
փելի չարչարանքներ տուած է Ներսէս վարդա-
պետին. այդ չարչարանքներու պարզ պատու-
թիւնն անգամ սարսուռ կաղզէ մարդուս, և հայր
սուրբին մինչև հիմակ ողջ մնալը հրաշքի պէս
բան մըն է:

Իր բանտարկութենէն քիչ առաջ՝ Ներսէս վար-
դապետը ընդարձակ տեղեկագիր մը պատրաս-
տած էր Բաղէշի կուսակալութեան ընդհանուր
վիճակին նկատմամբ, և կարնոյ առաջնորդ Շիշ-
մանեան Ղևոնդ եպիսկոպոսին զրկած էր, որպէս

սից, մեր թղթակիցի հետևեալ հեռագիրը,
ապրիլի 29-էն.

«Գիլլոն ճանապարհ է ընկել Երզրումից
ապրիլի 26-ին, բայց սահմանի վրա թիւր-
քաց իշխանութիւնը նրան բռնեց և վերա-
դարձրեց Երզրում»:

Այդ նոյն հարցի վերաբերմամբ կարելի
ապրիլի 26-էն, մի ուրիշ աղբիւրից մեզ
զրուում են հետևեալը.

«Այսօր այստեղից դուրս եկաւ թիւրքաց
հիւպատոսը: Նա ուղղակի կանչված է Կ.
Պօլիս, ուր նա գնալու է Երզրումի վրայով:
Հիւպատոսի այսպիսի յանկարծակի յետ
կանչելու պատճառը Գիլլոնի անցագրին
ձեռք բաշխելն է, որի համար և սուլվանը
նրան պաշտօնանկ է արել»:

ՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐԸ

Պալըէսէրի հայերի ամօթալի ուղերձը, որի
մասին զրեւ էր Կ. Պօլիս մեր թղթակիցը՝ իր ան-
ցեալ թղթակցութեան մէջ, հետևեալն է:

«Բարձրեան Աստուած մեր Օգոստոսփառ Վե-
հապետը անասան պահէ իր փառապանք դա-
հուն վրա.

«Հայ հաւատարիմ հպատակները հինգ հարիւր
տարիէ ի վեր Ն. Կ. Վեհափառութեան Օգոստոս-
փառ նախորդներուն կայսերական բարձր հովա-
նիին սպախեցելով անորոք ասորած ու վարձա-
տրութեանց արժանացած են: Մանաւանդ Վեհ.
Սուլթանին բարեխնամ կայսրութեան օրով ամեն
տեսակ երջանկութիւններ ու շնորհներ վայելած
են: Հայերէն կարգ մը անձեր, որք չարն ու բա-
րին չեն կրնար որոշել և ո ո և է կերպով խռովա-
բարներու թնկարութիւններէն խաբուած են, ա-
պօրէն և ցաւալի ընթացքներու մէջ գտնուած են.
Պալըէսէրի հայերը ամենայն ցաւով ի-
մացած են թէ անբարոյականութեամբ և թշնա-
մական ուղիով սոգորուած ու Տէրութեան առջև
բարի համբաւը աւելու չար նպատակն ունեցող
մէկ քանի անձեր հաւատարմութեան ու ճշմար-
տութեան հակառակող զեկեցումներ պիտի ընեն»:

զի տեղւոյն անգլիական փոխ-հիւպատոսին մա-
տուցանէ: Ղևոնդ եպիսկոպոս, որ ինքզինքը
թիւրքէ մը աւելի թիւրք կը ձևացնէ, յարմար
չէր գտած այդ տեղեկագիրը իր հասցէին յանձ-
նել, վախնալով որ մի գուցէ անհաւատարմու-
թեան ցոյց մը ըրած ըլլայ այս կերպով վեհ-
հափառ սուլթանի կառավարութեան դէմ:

Վերջերս «Տէլի Թէլեկրաֆ» լրագրին Մուշի
թղթակիցը յաջողած էր ձեռք անցունել զայն և
անգլիերէնի թարգմանելով հրատարակել տուած
էր նոյն թիւրքին ապրիլ 13-ի թէոյն մէջ: Այդ
տեղեկագիրը, որ լայնածաւալ անգլիական թիւր-
քին ամբողջ վեց սիւնակները զբաւած է, իր
տեսակին մէջ զուրկ-գործող մըն է: Շատ վառ-
վուռն գոյներով կը նկարագրէ՝ հայ ժողովուրդի
ընկերական, բարոյական ու անտեսական թշուա-
ռութիւնը և կը գուշակէ Սասունի պատմա-
կան կոտորածը, որ տեղեկագրի խմբագրութեան
տարիներ յետոյ պատահեցաւ: Տեղեկագրին ընա-
գրելը ֆրանսերէն է, թէպէտ ոչ զերծ լեզուի
սխալներէն, կը յարէ «Տէլի Թէլեկրաֆ»-ի թղթ-
ակիցը: Կը յուսանք որ պիտի կրնանք յառաջի-
կային մաս առ մաս թարգմանել սոյն տեղեկա-
գիրը և ծանօթացնել զայն «Մշակի» ընթերցող-
ներուն:

Այստեղ հասած է Ֆրանսիայի վանահայր հուշա-

թէ և այդ կարգի զեկեցում մը ըլլայ իսկ, ներկայ
ժամանակին մէջ, ուր ամեն բան արդարութեամբ
կը դատուի, յայտնի է թէ մանրագին ըննու-
թեամբ պիտի հաստատուի թէ այդ զեկեցումնե-
րը լոկ զրպարտութիւններ են և թէ անոնց հեղ-
նակները պիտի պատժուին, սակայն կարելի չէ
մտքէ անցնել թէ հոս պիտի գտնուի անհատ մը
որ ընդունի այդ տեսակ աներևակայելի և անհա-
ղաբովի վատութիւն մը: Ուստի այդ ստութիւնն
ու զրպարտութիւնը այժմէն բացարձակապէս մեր-
միտով հանդերձ ստորագրեալ ծառայք կը յայտա-
բարեն թէ, ինչպէս արդէն ալ ըսուած է, իրենց
անձը նուիրած են Վեհ. Սուլթանին փառքին ա-
ւելնալուն և Սնոր կեանքին երկարելուն համար
աղօթելու և թէ օսմանեան մշտապես տէրութեան
հովանաւորութեամբ կը փառաւորուին: Միան-
գամայն կը խնդրեն մատուցանել ասիկա յոռո
կայսերական զահուն»:

Եւ այդ ամօթալի ուղերձին առաջին ստորագ-
րողները, ինչպէս միշտ, հայոց հոգեբարկաններն
են. — առաջին տեղը ստորագրել է առաջնորդա-
կան փոխանորդը, նրանից յետոյ ըստանալները, և
ապա «հաւատարիմ հօտը»...

ՆԵՐԿԱՅԻՆ ԹՂԹԱԿԻՑԸ ԱՂԱՇԿԵՐՍՈՒՄ

Մենք արդէն մի անգամ առիթ ունեցանք հա-
ղորդելու, որ մի երթալից թղթակից անցել է
Ալաշկերտի կողմերը, որին իւշքիխէյի հայոց վան-
քը մերժել էր զիչիւրը ապատան տալ:

Այդ նոյն թղթակիցի մասին սահմանազիւրից
մեզ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները.
«Մեզ հասած ամենավերջին տեղեկութիւններից
երևում է, որ այս օրերս իզդիրի վրայից դէպի
թիւրքաց Հայաստան անցած թղթակիցը իւշքի-
խէյի վանքից դիմել է Բայազէտ, որովհետև զը-
ժուարութիւնների է հանդիպել իր որոշած ճանա-
պարհով գնալու»:

«Կրկին հաստատվեց, որ իւշքիխէյի վան-
քում մերժել են նրան հիւրասիրել. ճշդից, որ
Յովհաննէս եպիսկոպոսն այդ ժամանակ վանքում
չէ եղել: Մինչև այժմ էլ նա գտնվում է Բայազէ-
տում: Թղթակիցը հետ այդպէս ստոր վարվողները
եղել են Առաքել ու Գրիգոր վարդապետները:
Առաքել վարդապետին ինչ հրէշ լինելը մեզ վա-
ղուց յայտնի էր, բայց վերջինից չէինք սպասում.

կաւոր Նիկողոս եպիսկոպոսը և իրեն հետ միա-
սին չորս վարդապետներ: Վարդապետներէն մէ-
կուն այն ատիճան ծանր չարչարանքներ տուած
էին, որ խեղճ մարդը Պօլսոյ նաւահանդիստին
մտեցած պահուն խեղճ կը կորսնցնէ և «Լա-
իւա իլալլահ, Մուհամմէդ Բէսուլլաւ» կաղա-
ղակէ:

Իրեն ընկերացող ուստիկանները այս բացա-
բանութիւնէն կը հետեցունեն թէ վարդապետը
խալամութիւն ընդունած է, ուստի Պօլիս օտը
կոխածուն պէտ բոլորը միասին ուստիկանատուն
կը փոխադրեն և հոն, խնկարոյոյ վարդապետը
խցիկի մը մէջ կը բանտարկեն. ոչ օք հիմակ
կարող է յիշեալ վարդապետին հետ ազատ տե-
սակցել բանտին մէջ. տեսակցութիւններ, եթէ
երբէք թոյլատրուին, տեղի կունենան ուստիկանի
մը ներկայութեամբ և թիւրքերէն լեզուով:
Կառավարութիւնը անհամբար կը սպասէ, որ
վարդապետը նոր և աւելի բացօթյոյ յայտարարու-
թեամբ մը իրաւական կրօնն ընդունի. բայց նա
կը պնդէ թէ խնկարութեան վարկիկն մը մէջ
բերնէն փախուցած էր վերոյիշեալ բացաբանչու-
թիւնը և միշտ կը մնայ հաւատարիմ իր կրօնին:
Չը մտանանք յիշել թէ, ոչ միայն այս վար-
դապետը, այլ Ֆրանսիայի վանահայրը ու միւս վար-
դապետներն ալ տակաւին բանտը կը մնան, չը
նայելով որ սուլթանը զիրենք ազատ արձակած

արանք իրանց ստոր վարձուները բացատրել են
թիւրքաց կառավարութիւնից ունեցած երկիւ-
ղով:

«Թղթակիցը Բայազէտ է հասել ապրիլի 3-ին և
իջևանել է տեղացի մի հայի տուն, որ քարվան-
սարայի պէս մի բաժանունը ունի իր տանը ճա-
նապարհորդների համար: Միւս օրը փաշայի պա-
հանջով և ժանդարմների հրակերով թղթակիցը
ներկայացել է փաշային: Փաշան պահանջել է, որ
նա անմիջապէս հեռանայ և նա նոյն օրը դափ-
թիաների ուղեկցութեամբ ճանապարհ է ընկել
Մակու՝ Վանի վրայով Սասուն մտնելու համար:
Իւշքիխէյի գիւղից նրան ընկերացել է իբրև առաջ-
նորդ մի սասունցի»:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՆՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

I

Լօնդօնի «St. James's Gazette» լրագրում կար-
դում ենք.

«Քննիչ յանձնաժողովի գործունէութիւնը ար-
դէն վերջացած լինելով, յանձնաժողովի երօպա-
կան ներկայացուցիչները ցանկացել են այցելել
Սասունի գիւղերը և աչքով տեսնել կոտորածի
տեղերը: Սակայն թիւրքաց կառավարութիւնը
հաւանութիւն չէ տուել այդ բանին: Այն ժամա-
նակ այդ ներկայացուցիչները առաջարկել են, որ
թիւրքաց կառավարութեան կարծիքը իրանց
պաշտօնապէս սպասուի, որպէս զի այդ մեր-
ժումից յետոյ նրանք կարողանան զիմել իրանց
կառավարութիւններին և կատարեն այդ ճանա-
պարհորդութիւնը բոլորին անկախ կերպով:

«Եւրոպական ներկայացուցիչներն այս առաջար-
կութիւնը նկատում է իբրև մի շատ հետաքրքիր
կէտ, քննութեան գործի բնաւորութեան մէջ»:

II

Ֆրանսիական «L'Algérie» լրագրին Կ. Պօլսից
գրում են հետևեալը:

«Քննիչ յանձնաժողովը շուտով կաւարտի իր
գրադմունքները: Եթէ հայերին գոհացում չը տրվի
խտապէս պատժելով յանցաւորներին, այն բուն
յուզմունքը, որ տրուում է Հայաստանի բոլոր
կենտրոններում, կարող է սաստիկ բռնկվել»:

III

«Independance Bretagne» լրագրին Կ. Պօլսից
հեռագրում են մայիսի 1-ից.

«Հայաստանում մտցնելի ընթացիկներ ծրագրելը,

է իրենց քարտավարներէն կամ գաւառական
բանտներէն: Բայց այս մարդիկը չեն ուրանար, որ
Պօլսոյ բանտըրը մէկ-մէկ արքայութիւն են բաղ-
դատմամբ գաւառի բանտերուն: Հաւանօրէն քա-
նի մը որ յետոյ վերջնապէս պիտի յանձնուին
պատրիարքարանին»:

Անդրիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի զեպանները
բարենորոգմանց ծրագիր մը պատրաստած էին
Հայաստանի համար և իրենց տէրութիւններուն
զրկած էին, որպէս զի վաւերացուելով իրենց վե-
րաբարձուի, որմէ յետոյ պիտի ներկայացնէին
սուլթանին, ստիպողաբար պահանջելով անոր
գործադրութիւնը:
Հակառակ չըլած այլ ընդ այլոց զրոյցներուն,
յիշեալ ծրագրը տակաւին չէ վերադարձուած
զեպաններուն, բայց այս օրերս կը սպասուի:
Մարզին պարունակութիւնը բացարձակապէս
գաղտնի կը պահուի, սա չափը գիտնէր միայն,
որ ինքնավարութիւն (autonomie) չը պիտի
տրուի մեզի, այլ ընդարձակ սահմանի մը վրա
հիմնաւոր վարչական բարենորոգումներ տեղի
պիտի ունենան եւրոպացուց ձեռքով և հայերը
մեծ բաժին պիտի ունենան նոր վարչութեան
մէջ:

Հրաչեայ

